ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
պետական ոչ առևտրային կազմակերպությունը աշխատանքի է հրավիրում

ԻՐԱՎԱԲԱՆ–ԻՐԱՎԱԳԱՆ ՆՈՒՅՆԱԳԱՆԱՅՆՈՂՆԵՐԻ

Պարտականությունները և լիազորությունները.

- իրականացնելու է թարգմանված իրավական ակտերի և փաստաթղթերի իրավական վերանայում,
- իրականացնելու է թարգմանված իրավական ակտերի լեզվաբանական գնահատում՝ օրենսդրական տեխնիկայի կանոնների հետ համապատասխանության մասով,
- աջակցելու է թարգմանիչներին և եզրաբաններին իրավական համապատասխանեցման ենթակա ԵՄ վերազգային իրավական հասկացությունների տեղայնացման հարցում,
- մասնակցելու է եզրաբանական նյութերի, շտեմարանների, ձեռնարկների մշակման աշխատանքներին:

Պահանջվող որակավորումը և հմտությունները.

- իրավաբանության ոլորտում բարձրագույն կրթություն,
- եվրոպական և ՀՀ իրավական համակարգի և օրենսդրական տեխնիկայի գերազանց իմացություն,
- **անգլերենի և հայերենի գերազանց իմացությունը պարտադիր է**, Եվրոպական միության մեկ այլ պաշտոնական լեզվի (բացի անգլերենից) իմացությունը կհամարվի առավելություն,
- Եվրոպական միության *«Acquis Communautaire»*–ի իմացությունը կհամարվի առավելություն,
- եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատություններում ստացած որակավորումը կամ մասնագիտացումը կհամարվի առավելություն,
- մասնագիտական աշխատանքային փորձը կհամարվի առավելություն,
- թարգմանության բնագավառում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Աշխատավարձը՝ մրցակցային և հիմնված փորձի վրա:

Աշխատաժամանակը՝ լրիվ կամ կես դրույք:

Թեստերին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. կենսագրական (CV)՝ հայերենով կամ անգլերենով,
2. բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
3. աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածք աշխատանքային գրքույկից,
4. անձնագրի պատճենը,
5. սոցիալական քարտի պատճենը (առկայության դեպքում):

Փաստաթղթային փուլն անցած դիմորդները կմասնակցեն գրավոր թեստավորման (անգլերենի իմացություն, ընդհանուր իրազեկություն, թարգմանչական և իրավական վերանայման հմտություններ), իսկ թեստավորման արդյունքում ամենաբարձր միավորներ ստացած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Փաստաթղթերի ընդունման **վերջին ժամկետն է՝ 29.09.2012թ.**:

Փաստաթղթերն ուղարկել **zmelikyan@translation-centre.am** էլեկտրոնային հասցեով կամ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ Հալաբյան 41ա հասցեով, ժամը 10:00-ից մինչև 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Կազմակերպության մասին

«Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի առաքելությունն է ապահովել ՀՀ իրավական ակտերի և ԵՄ իրավական ակտերի որակյալ թարգմանությունը համապատասխանաբար անգլերենով և հայերենով

(www.translation-centre.am):